

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Ծրագրի անվանումը **Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի պահպանում և զարգացում**

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագիր

«Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանում» ծրագիր

V

3. Ծրագրի իրականացման համար տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագիր.

N 10-15/Ի-12, «15»02.2019թ.

4. Հաշվետու ժամանակահատվածը. **2020թ. հունվար - դեկտեմբեր**

5. Կազմակերպության անվանումը **Հայաստանի ազգային ագրարային համալսարան**

6. Կազմակերպության ղեկավարի

ազգանունը, անունը, հայրանունը **Ուռուտյան Վարդան Էդիկի**

հեռախոսը **(+37412) 43-03-43**

Էլեկտրոնային փոստը **h.tspnetsyan@anau.am**

7. Ծրագրի գիտական ղեկավարի

ազգանունը, անունը, հայրանունը **Ոսկանյան Աշոտ Երջանիկի**

հեռախոսը **091 21 54 57,**

Էլեկտրոնային փոստը **ashot.voskan@gmail.com**

8. Հաշվետու ժամանակահատվածում

գիտական հրապարակումների ընդհանուր քանակը 6 / 0
(ՀՀ) (օտարերկրյա)

գիտաժողովներին ներկայացված զեկույցների ընդհանուր քանակը 0 / 1
(ՀՀ) (օտարերկրյա)

9. Ծրագրի իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները **5094.4** հազար ՀՀ դրամ

10. Ծրագրի գիտական ղեկավարի ստորագրությունը _____

11. Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը _____

«___» _____ 20.. թ.

Կ. Տ.

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

«ՀՀ գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության առաջադրումը և դրա կիրառման նախադրյալները» ծրագիրն իրականացվել է հաստատված առաջադրանքին և օրացուցային պլանին համապատասխան:

Հաշվետվությունում ներկայացվում է 2021թ. իրականացված հետազոտական աշխատանքների ամփոփումը:

1. Ագրարային կլաստերների գործունեության չափորոշիչները - Տնտեսության զարգացման համաշխարհային միտումները, ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման հրատապությունը ուղղորդում են հատկապես ագրարային ոլորտում իրականացնել այնպիսի քաղաքականություն, որը առավելագույնս կզուգակցի ագրոպարենային համակարգի ոլորտների արդյունավետ կառավարելիությունը, գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների միջև համագործակցությունը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունն ագրոբիզնեսի կայացմանը, գյուղական բնակչության կոլեկտիվ անվտանգության ապահովման տարրերի կիրառմանը և այլն: Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար հրատապ է ինչպես երկրի, այնպես էլ տարածաշրջանների էկոնոմիկան իներցիոնից տեղափոխել զարգացման ինովացիոն ուղու: Ըստ հետազոտությունների հանրապետությունում տարածաշրջանային մակարդակով ինովացիոն ագրոպարենային համակարգի ձևավորման կարևորագույն ասպեկտ կարող է հանդիսանալ զարգացման կլաստերային մոդելը և այն ագրարային քաղաքականությունում ամրագրելը: ՀՀ կառավարության 2019թ. գործունեության ծրագրում խնդիր էր դրվել ստեղծել կրթական, գիտահետազոտական, արդյունաբերական կլաստերներ և խթանել համագործակցությունը, իսկ 2021-2026թթ. ծրագրում ընդգծվում է «...տեղական և ԵԱՏՄ

անդամ արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացման կապերի զարգացումը և Հայաստանում կլաստերների ձևավորումը...»¹:

Հայաստանի գյուղական տարածաշրջաններում, որպես կանոն, զարգացած չէ կոոպերացման, համախմբված, ներքին ռեսուրսների ակտիվացման սկզբունքներով տարաբնույթ մարտահրավերներին դիմակայելու և արդյունավետ համագործակցելու մշակույթը:

Վերջին իրադարձություններով պայմանավորված հանրապետության մեծաքանակ համայքներ հայտնվեցին սահմանամերձ կարգավիճակում, ուր հատկապես դժվարացավ գյուղատնտեսական արտադրության կազմակերպման գործընթացը՝ հրատապ դարձնելով համագործակցության նոր ձևերի և նախաձեռնությունների ներդրումը:

ՀՀ գյուղատնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման գործիք կարող է լինել տարածաշրջաններում պարենային արժեչղթաների օղակների ինտեգրված, արդյունավետ գործելակերպ ապահովելը՝ կլաստերային մոտեցումների կիրառմամբ (Հավելված 1):

Տարածաշրջանային կլաստերների ձևավորման հիմնական **նպատակներն են**. ճգնաժամի հաղթահարումը, ազգային մրցունակության բարձրացումը, տարածքային համաչափ զարգացումը, տնտեսական աճի ապահովումը և արտահանման ծավալների ավելացումը: ՀՀ-ում կլաստերային մոտեցումների ներդրման **խնդիրներից են**.

- ագրարային կլաստերների գործունեությունը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի բացակայությունը,
- ենթակառուցվածքների թույլ զարգացվածությունը,
- ագրարային կլաստերների գործունեության առավելությունների մասին տեղեկատվության, պոտենցիալ սուբյեկտների մասնակցության շահադրդման, ֆինանսավորման, վարկավորման, հարկման տարբերակված մոտեցումների բացակայությունը,
- կլաստերային քաղաքականության առաջադրման և ներդրման ճանապարհային քարտեզի բացակայությունը,

¹ ՀՀ կառավարության գործունեության 2021-2026թթ. ծրագիր, էջ 27 <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

- ՀՀ կառավարության գործունեության, ոլորտային և մարզային զարգացման ռազմավարություններում կլաստերների ձևավորմանն ուղղորդված քաղաքականության բացակայությունը և այլն:

Տարածաշրջանում կլաստերների ձևավորման և արդյունավետ գործունեություն ապահովելու կարևոր պայման է ինստիտուցիոնալ – կազմակերպական միջավայրի առկայությունը, քիչ թե շատ զարգացած ենթակառուցվածքները՝ ոռոգման համակարգ, տրանսպորտ, կապ, գիտահետազոտական, նախագծային կազմակերպությունների առկայություն, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նախաձեռնողականություն և աջակցող քաղաքականություն:

Կլաստերի լիզանսի զարգացման կուտակված միջազգային փորձից (Հավելված 2) ելնելով՝ մեր կողմից մոտարկվել են ագրարային կլաստերի արդյունավետ գործունեությունը բնութագրող հետևյալ որակական և քանակական չափորոշիչները.

1. Ագրարային կլաստերի կազմում ընդգրկված գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների, վերամշակողների, փոքր և միջին կազմակերպությունների քանակը,
2. Կլաստերի մասնակից հանդիսացող՝ գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների, կոոպերատիվների, վերամշակողների կողմից թողարկված արտադրանքի ծավալը, իրացումից ստացված հասույթի մեծությունը, կատարված ծախսերի մեծությունը, աշխատանքի արտադրողականության մակարդակը, համախառն եկամուտը, զուտ շահույթի մեծությունը և շահութաբերության մակարդակը:
3. Կլաստերի մասնակիցների կողմից մրցունակ, բարձրորակ, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքի արտադրությունը,
4. Գյուղացիական (ֆերմերային) տնտեսություններում, փոքր և միջին ձեռնարկություններում ընդգրկված աշխատողների թվաքանակը, համագործակցության արդյունքում ստեղծված նոր աշխատատեղերի քանակը,
5. Համագործակցության արդյունքում իրականացված ներդրումային նախագծերի քանակը,

6. Կլաստերի մասնակիցների կողմից իրականացրած նորամուծական նախագծերի քանակը,
7. Արտահանված գյուղատնտեսական մթերքի ծավալը կլաստերի մասնակիցների կողմից,
8. Տնտեսական աճի ցուցանիշը տարածաշրջանում, որտեղ ձևավորվել է ագրարային կլաստերը:

2. Կլաստերներում աշխատանքների կազմակերպման և սուբյեկտների միջև փոխհարաբերությունների սկզբուքները - ՀՀ-ում կլաստերի ստեղծման և սուբյեկտների միջև փոխհամաձայնեցված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է միավորման և կառավարման այնպիսի մոդելներ, որոնք թույլ կտան սուբյեկտներին ռացիոնալ և արդյունավետ բաշխել պարտականությունները և սահմանել նրանց տեղն ու դերը կլաստերում:

Հանրապետությունում տարածաշրջանային ագրարային կլաստերի անդամ կարող են դառնալ պետական՝ հատկապես տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, գիտակրթական հաստատությունները, ներդրողներն ու ֆինանսական կառույցները, գյուղացիական տնտեսությունները, ագրարային ձեռնարկությունները՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ, վերամշակողներ և ծառայություններ մատուցողներ: Կլաստերի տեսակով և կառավարման մոդելով պայմանավորված՝ սուբյեկտները կարող են ունենալ ինչպես առաջնային, այնպես էլ երկրորդային դերեր: Նախնական փուլում որպես առաջատար կազմակերպություն կարող են հանդես գալ խոշոր տնտեսավարող սուբյեկտներն ու գիտակրթական հաստատությունները, իսկ կլաստերի ստեղծման նախաձեռնողի դերում՝ պետությունը, մասնավորապես՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները (աղյուսակ 1):

Գյուղատնտեսական կլաստերներում ներգրավված սուբյեկտները և դերակատարությունը

Սուբյեկտներ	Դերակատարություն
Պետական մարմիններ (կենտրոնական, տարածքային և տեղական ինքնակառավարման)	<ul style="list-style-type: none"> • Իրավական հիմքերի ձևավորում, լրամշակում և այլն, • Պարենային անվտանգության ապահովման մակարդակի բարձրացում, • Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացում, • Ճյուղի, տարածաշրջանի մրցունակության բարձրացում, • Գյուղացիական տնտեսությունների, ագրոբիզնեսի այլ սուբյեկտների մրցակցային հնարավորությունների բարձրացում արտաքին և ներքին շուկաներում,
Գիտակրթական հաստատություններ	<ul style="list-style-type: none"> • Կլաստերի կարիքներից ելնելով՝ գիտական հետազոտական աշխատանքների իրականացում, • Ինովացիոն տեխնոլոգիաների մշակում, ձեռքբերում (տրանսֆեր), տրամադրում և ներդրման աջակցություն, • Կադրերով ապահովում և վերապատրաստումների կազմակերպում, • Նպատակային կադրերի պատրաստում, • Խորհրդատվությունների տրամադրում և տեղեկատվական ծառայությունների մատուցում,
Ներդրողներ (տեղական և օտարերկրյա)	<ul style="list-style-type: none"> • Ներդրումներով ապահովման հարցեր, • Կլաստերում ներդրումների իրականացում՝ ելնելով իրենց գործունեության ուղղվածությունից, • Կլաստերում նախագծերի իրականացում վենչուրային մոտեցումների կիրառմամբ, • Ագրարային հատվածում համատեղ նախագծերի իրականացում,
Գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների, ագրոբիզնեսի համակարգի ձեռնարկություններ (գյուղատնտեսական արտադրանք արտադրողներ, վերամշակողներ, ծառայություն մատուցողներ)	<ul style="list-style-type: none"> • Բիզնեսի վարում կառավարման առաջավոր ձևերի կիրառմամբ, • Ինտեգրված և կոոպերացված աշխատանքների կազմակերպում, • Արտադրության ծավալների ընդլայնում, • Ռեսուրսների և ծախսերի արդյունավետ բաշխում, • Ենթակառուցվածքների օգտագործմամբ՝ տրանսակցիոն ծախսերի կրճատում, • Արտադրական հզորությունների և ռեսուրսների համատեղ օգտագործում, • Արտադրություն - վերամշակում գործընթացների տեղայնացում, մեկտեղում

Հատկանշական է, որ

- Կլաստերում անդամ հանդիսացող սուբյեկտների տեղով և դերով պայմանավորված՝ փոխշահավետ պայմաններով համագործակցությունը թույլ

կտա նրանց միջև ձևավորել երկարաժամկետ և հուսալի գործընկերային հարաբերություններ:

- Կլաստերի անդամները մշտական փոխազդեցության մեջ են և իրենց գործունեությունն իրականացնելիս պետք է պահպանեն բիզնես էթիկայի կանոնները կամ գործեն համաձայնագրով սահմանված որոշակի սկզբունքների շրջանակներում:

ՀՀ-ում ներկլաստերային հարաբերությունները կարող են կարգավորվել հետևյալ սկզբունքներով.

- **Փոխլրացման-** ներկլաստերային հարաբերություններում անդամների միմյանց լրացնող գործունեություն:
- **Մրցակցության զսպման-** կլաստերի սուբյեկտները չպետք է առճակատման մեջ մտնեն միմյանց հետ, այլ փոխշահավետ համագործակցություն իրականացնեն՝ ելնելով կլաստերի ընդհանուր նպատակներից:
- **Մատչելիության-** կլաստերի ստեղծումը պետք է աջակցի ոլորտի զարգացմանը (նոր գաղափարների իրականացում, ներքին խնդիրների առավել արդյունավետ լուծում):
- **Բազմակողմանի հաղորդակցության-** կլաստերի սուբյեկտները կխթանեն հորիզոնական և ուղղահայաց ինտեգրացիան՝ ապահովելով կլաստերիզացման գործընթացի խորացումը և զարգացումը:
- **Ընդհանրության-** կլաստերի արդյունավետ գործունեությունն իրականացվում է ընդհանուր սկզբունքներով և ուղղություններով:
- **Համապատասխանելիության-** սուբյեկտների գործունեությունը պետք է համապատասխանի պետության կողմից իրականավցող ագրարային և կլաստերային քաղաքականության ուղղություններին:
- **Կայուն փոխգործունեություն սուբյեկտների միջև-** կլաստերի կայունությունն ապահովում է սուբյեկտների միջև կայուն համագործակցությունը, որն ամրագրվում է պայմանագրերի և/կամ համաձայնագրերի միջոցով:
- **Իրազեկման-** կլաստերի ներսում տեղեկատվության հասանելիության ապահովում:

- **Ինքնուրույնության-** յուրաքանչյուր տնտեսավարող դառնալով կլաստերի անդամ չի կորցնում իր ինքնուրույնությունը: Ուղղակի հաղորդակցման հիման վրա առանձնացնում են այն խնդիրների շրջանակը, որոնք կարող են լուծում ստանալ համատեղ գործունեությամբ:
- **Իրավահավասարության-** կլաստերի սուբյեկտներն ունեն հավասար իրավունքներ:
- **Ռեսուրսներով ապահովվածության-** ներդրանքների և հումքի ձեռքբերումն իրականացվում է կլաստերի մատակարարների և այլ սուբյեկտների միջոցով՝ փոխշահավետ պայմաններով:
- **Ընդհանուր կառավարման-** կլաստերի բոլոր սուբյեկտները պետք է ներգրավված լինեն կառավարման համակարգում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս առանձնացնել կլաստերի ներսում անդամների միջև փոխհարաբերությունների ձևավորման երկու հիմնական եղանակ²: Առաջինի դեպքում անդամների միջև հարաբերությունները կարգավորվում են պայմանագրերի և համաձայնագրերի միջոցով, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում^{3,4}, ԵՄ որոշ երկրներում (օրինակ Դանիայում⁵): Երկրորդում՝ հարաբերությունները հիմնականում կարգավորվում են ինքնաբուխ կամ սիներգիկ էֆեկտով՝ հիմքում ունենալով ինչպես կլաստերի լիզացիայի, այնպես էլ ներկլաստերային հարաբերությունները կարգավորող սկզբունքները: ԵՄ որոշ երկրներում (օրինակ Իտալիայում⁶), Ճապոնիայում⁷ կլաստերի սուբյեկտների

² <https://utmagazine.ru/posts/10088-klaster>

³Соглашение о создании Пермского кластера волоконно-оптических технологий «Фотоника», <https://map.cluster.hse.ru/file/625/2.%20%D0%A1%D0%BE%D0%B3%D0%BB%D0%B0%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D0%B5%20%D0%BE%20%D1%81%D0%BE%D0%B7%D0%B4%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B8%20%D0%9A%D0%BB%D0%B0%D1%81%D1%82%D0%B5%D1%80%D0%B0.pdf>

⁴ Кластеры, дайджест новостей, выпуск № 5, Май 2019г., <https://cluster.hse.ru/mirror/pubs/share/282062410>

⁵ Наджафов В.Н. ОБЗОР ЗАРУБЕЖНОГО ОПЫТА ВНЕДРЕНИЯ КЛАСТЕРОВ, Вестник № 4 УДК 330.1; 330.8, <https://vestnik-mgou.ru/Articles/Doc/4056>

⁶ Наджафов В.Н. ОБЗОР ЗАРУБЕЖНОГО ОПЫТА ВНЕДРЕНИЯ КЛАСТЕРОВ, Вестник № 4 УДК 330.1; 330.8 <https://vestnik-mgou.ru/Articles/Doc/4056>

⁷Алейникова И.С., Воробьев П.В., Исакидис В.А., Кадочников С.М., Кожин Д.Е. и др. Модели организации региональных промышленных кластеров: обзор международного опыта <https://cyberleninka.ru/article/n/modeli-organizatsii-regionalnyh-promyshlennyh-klasterov-obzor-mezhdunarodnogo-opyta/viewer>

փոխհարաբերությունները և կլաստերին անդամակցելը լինում է ինքնաբուխ՝ առանց որևէ պայամանագրի կամ համաձայնագրի:

Եթե կլաստերը ձևավորվում է պետության նախաձեռնությամբ՝ կառավարման գործընթացը, ֆինանսավորումը և սուբյեկտների փոխհարաբերությունները կանոնակարգվում են պետական կարգավորման կառուցակարգերի միջոցով (օրինակ Գերմանիայում⁸):

Հաշվի առնելով միջազգային փորձը՝ հանրապետությունում կլաստերի ներսում անդամների միջև փոխհարաբերությունները կարող են կարգավորվել պայամանագրի և/կամ համաձայնագրի միջոցով, որը թույլ կտա սահմանել կլաստերի սուբյեկտների իրավասություններն ու պարտավորությունները, հստակեցնել տեղն ու դերը կլաստերում:


3. Կլաստերի կառավարման համակարգի ձևերը- Կլաստերային մոտեցումների կիրառումն ավելի է կարևորվում հատկապես ճգնաժամային իրավիճակներում, երբ անհրաժեշտ է տնտեսավարողների համար գտնել կազմակերպման և ինքնակազմակերպման, մրցունակությանը նպաստող համագործակցության գործուն ձևեր: Կլաստերային սկզբունքները կիրառելի են տարածաշրջանային կտրվածքով և նպաստում են կոնկրետ ճյուղերի գործունեությանն ու զարգացմանը:

Ելնելով կլաստերի լիզանսման միջազգային փորձից (Հավելված 2)⁸ ՀՀ-ում կլաստերի կառավարման համակարգը կարող է ունենա.

- հստակ սահմանված նպատակներով կլաստերի զարգացման ռազմավարություն,
- կլաստերի կառավարման համակարգում ծառայությունների մասնագիտացում,
- ֆինանսավորման և կադրերով ապահովման կայունություն,
- կոնվերգենցիա «Եռակի պարույրում» (պետություն-բիզնես-գիտություն),
- կլաստերի սուբյեկտների եկամուտների աճ:

⁸ Тимофеева Ю.А., аспирант, Научный руководитель д-р экон. наук, проф. П. С. Лемещенко, РОЛЬ ИННОВАЦИОННЫХ КЛАСТЕРОВ ГЕРМАНИИ ДЛЯ ПОВЫШЕНИЯ ЕЕ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ И ВОЗМОЖНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ ДАННОГО ОПЫТА В РЕСПУБЛИКЕ БЕЛАРУСЬ, https://rep.bntu.by/bitstream/handle/data/29029/Rol_innovacionnyh_klasterov_Germanii_dlya_povysheniya_ee_konkurentosposobnosti.pdf?sequence=1&isAllowed=y

Հնարավոր ենք համարում ՀՀ-ում կլաստերների ցիկլային բնույթի կառավարման համակարգի կիրառումը, որը ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծ. 1. ՀՀ-ում ագրարային կլաստերի կառավարման ցիկլը

Կլաստերի կառավարման ցիկլի **առաջին փուլը** պետք է լինի ցանկալի արդյունքների որոշումը: Այս փուլում կձևավորվի կլաստերի հայեցակարգը, խնդիրները, ռազմավարությունն ու թեմատիկ բլոկների նպատակները՝ հիմք դնելով կառավարման գործընթացին:

Ագրարային կլաստերի կառավարման համակարգում ռազմավարական զարգացման, պլանային և ծրագրային նպատակների մշակման համար կարող է ձևավորվել «Գլխավոր» խորհուրդ, որում ընդգրկված կլինեն կլաստերը նախաձեռնող

կառույցը կամ կազմակերպությունը, ինչպես նաև կլաստերի բոլոր բլոկներից անդամներ: Խորհուրդը կարող է ձևավորվել կոլեգիալ հիմունքներով և ունենալ հետևյալ գործառույթները.

1. Գործունեության գերակա ուղղությունների որոշում,
2. Կլաստերային որոշումների ընդունում և փոփոխում,
3. Սուբյեկտների ընդունում և հեռացում,
4. Նախագահող կառույցի կամ կազմակերպության ընտրություն,
5. Ֆինանսական պլանի ընդունում և փոփոխում,
6. Մասնաճյուղերի բացում և այլ կազմակերպություններում մասնակցության որոշում,
7. Կլաստերի զարգացման ծրագրի մշակում,
8. Կլաստերի ռազմավարության մշակում,
9. Ճյուղային ցանցերի կամ այլ կլաստերների հետ համագործակցություն,
10. Կլաստերի խորհուրդների աշխատանքների վերահսկողություն:

Երկրորդ՝ պլանավորման փուլն առաջին փուլում մշակված և ընդունված ռազմավարության կատարման գործընթացն է: Բացի դրանից, այս փուլում մեծ ուշադրություն պետք է դարձվի պոտենցիալ սուբյեկտների հետ պայմանագրերի և/կամ համաձայնագրերի կնքմանը, մոնիթորինգի և գնահատման կառուցակարգերի ստեղծմանը: Կպլանավորվեն հստակ անելիքները և կկատարվեն պարտականությունների և ռեսուրսների բաշխում: Պլանավորման փուլը կարող է տատանվել մի քանի ամսից մինչև մի քանի տարի:

Երրորդ՝ իրականացման փուլը կլաստերի գործարկման միջոցառումների համախումբն է: ՀՀ տիպային կլաստերներում կարող են ներառված լինել հետևյալ գործընթացները՝

- Կապերի ստեղծում,
- Տեղեկատվության տրամադրում,
- Կլաստերի պահանջմունքների որոշում,
- Համագործակցության (միասին գործելու) խթանում,
- Կրթության կամ որակավորման բարձրացման նախատեսում,

- Կլաստերի առաջխաղացում:

Գործընթացների կատարումը կարող է դրված լինել «Քարտուղարության» (Ֆասիլիտատորի) վրա, որն էլ կհամակարգի ցիկլային կառավարման երկրորդ և երրորդ փուլերում նախատեսված գործառույթները: «Քարտուղարությունը» կարող է ձևավորվել ինչպես «Գլխավոր» խորհրդի անդամներից, այնպես էլ կլաստերի կողմից վարձու մասնագետներից:

Չորրորդ՝ մոնիթորինգի փուլում կիրականացվի պարբերաբար տեղեկատվության հավաք և վերլուծություն՝ ինչպես կլաստերի գործունեության, այնպես էլ սուբյեկտների առաջընթացի վերաբերյալ: Այս փուլում կվերահսկվի պլանավորման ժամանակ նախատեսված գործընթացների կատարման վիճակը:

Չորրորդ փուլի իրականացումը կարող է դրված լինել «Ծրագրերի գրասենյակի» գործառույթներում, որը տվյալների հավաքագրումից հետո «Գլխավոր» խորհրդի հետ համատեղ կիրականացնի արդյունքների գնահատում:

Հինգերորդ՝ գնահատման փուլը, ռազմավարական պլանի համաձայն, կոնկրետ ժամանակահատվածի փաստացի արդյունքների համեմատությունը թույլ կտա եզրակացնել կլաստերի նպատակների կատարման վիճակը, ուժեղ և թույլ կողմերը: Բացի դրանից կլաստերի արդյունավետության մասին տեղեկատվությունն ամուր հիմք կհանդիսանա արտադրող – ներդրող – արտաքին աշխարհ քաղաքականության համար: Գնահատումը կիրականացվի տարին մեկ անգամ:

4. Տարածաշրջանային կլաստերների ձևավորումը- Հաշվի առնելով հանրապետությունում կլաստերային քաղաքականության իրականացման օբյեկտիվ նախադրյալները, տնտեսավիճակագրական ռեգրեսիոն և կոռելյացիոն վերլուծության մեթոդների կիրառմամբ, իրականացվել է տարածքների կլաստերային բաժանում (Հավելված 3.1): ՀՀ գյուղական տարածաշրջաններում գյուղատնտեսության մասնագիտացման, ճյուղային առանձնահատկությունների, ռեսուրսների օգտագործման արդյունավետության, ենթակառուցվածքների առկայության, տնտեսավիճակագրական ռեգրեսիոն և կոռելյացիոն գործակիցների համեմատական վերլուծության արդյունքում բուսաբուծական առաջնային արտադրանքների գծով կատարվել է աստիճանակարգում

(աղյուսակ 3) և դուրս բերվել այն ոլորտները, ուր առավել պահանջված է փոխկապակցվածություն և արդյունավետություն ապահովող կլաստերների ձևավորումը: Համանման մեթոդի կիրառմամբ վերլուծություններ են իրականացվել նաև անասնաբուծության ճյուղում (Հավելված 3.2):

Աղյուսակ 2.

Ռեգրեսիոն վերլուծության հիմնական ցուցանիշների հիման վրա բուսաբուծական արտադրանքների ցուցանիշների մոդելների աստիճանակարգում ըստ ՀՀ մարզերի⁹

	Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	Կարտոֆիլ	Բանջարանոցային մշակաբույսեր	Բոստանային մշակաբույսեր	Պտուղ և հատապտուղ	Էսաղող
Արագածոտն	4	3	6	5	1	2
Արարատ	3	6	4	5	1	2
Արմավիր	-	3	2	5	1	4
Գեղարքունիք	3	4	2	-	1	-
Լոռի	3	5	2	-	1	4
Կոտայք	2	-	-	-	1	3
Շիրակ	3	1	4	-	2	-
Սյունիք	3	1	-	-	2	4
Վայոց Ձոր	4	4	3	5	1	2
Տավուշ	1	2	3	-	-	4

Ռեգրեսիոն ու կոռելյացիոն մեթոդներով բուսաբուծական և անասնաբուծական արտադրանքների ցուցանիշների կառուցված մոդելների նշանակալիությունից ելնելով հնարավոր ենք համարում ձևավորել.

- Արարատ և Արմավիր մարզերում պտուղ, բանջարեղենի և բոստանային մշակաբույսերի արտադրության կլաստեր: Մարզերում վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը վերջին 5 տարիներին տատանվել է 60-70%-ի սահմաններում: Արարատի և Արմավիրի մարզերում առկա են կլաստերի ձևավորման համար անհրաժեշտ ենթակառուցվածքները, ինտեգրված գործելու

⁹ Սանդղակը մշակվել է՝ ելնելով կոռելյացիայի և դետերմինացիայի գործակիցների, ռեգրեսիայի գործակիցների T արժեքների առումով, մասնավորապես՝ առավելագույնը գնահատվել է 1-ին տեղ (R=0.98-0.99, R²=0.97-0.99, t_{բերք}> 10), նվազագույնը 5-րդ կամ 6-րդ տեղ (R=0.89-0.91, R²=0.59-0.79, t_{բերք}> 3)

հնարավորությունները: Կարևորվում է նաև համանման կլիմայական առանձնահատկությունները և աշխարհագրական դիրքը:

- Արմավիրի մարզում ձվի և թռչնամսի արտադրության կլաստեր: Մարզում առկա կերի արտադրության ծավալները, թռչնագլխաքանակը հնարավորություն են տալիս ձևավորել ձվի և թռչնամսի արտադրության կլաստեր, որը կնպաստի հանրապետությունում թռչնամսի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

- Արարատի և Վայոց Ձորի մարզերում պտղի և գինու արտադրության կլաստեր: Մարզերի մասնագիտացումը հիմնականում պտղաբուծությունն ու խաղողագործությունն է: Կլաստերում կարող են ներառվել մեծաքանակ գինու արտադրության ձեռնարկություններ, առավել ևս, որ Վայոց ձորը առանձնանում է խաղողի Արենի յուրահատուկ սորտի մշակմամբ և գինիների արտադրությամբ: Դրա առաջխաղացումը, ճանաչելիության ընդլայնումն ու ագրոտուրիզմի զարգացումը կարող է հանդիսանալ հեռահար նպատակ:

- Արագածոտնի և Կոտայքի մարզերի աշխարհագրական դիրքով և կլիմայով պայմանավորված՝ պտղի արտադրության, ինչպես նաև թռչնաբուծական ձեռնարկություններով և թռչնագլխաքանակով պայմանավորված՝ ձվի արտադրության կլաստերներ: Կոտայքի մարզում արդյունավետ կարող է գործել պտղաբուծության ուղղվածության օրգանական գյուղատնտեսական կլաստերը, քանի որ առկա են օրգանական արտադրությամբ մասնագիտացված 7 արտադրողներ:¹⁰

- Արմավիրի, Կոտայքի մարզերում և Երևան քաղաքում խոզաբուծական կլաստեր: Խոզաբուծական տնտեսությունների աշխարհագրությամբ պայմանավորված կլաստերի գործունեությունը կնպաստի ՀՀ-ում խոզի մսի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

- Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում հնարավոր է գործարկել կարտոֆիլի արտադրության և արժեշղթայի օղակների, արդյունավետ համագործակցության ապահովման, ինչպես նաև ոչխարաբուծության կլաստերներ:

¹⁰ www.ecoglobe.com միջազգային սերտիֆիկացնող և հսկող մարմին, պաշտոնական կայքէջ

- Լոռու և Շիրակի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի արտադրության կլաստերներ, որոնք բխում են նաև մարզերի տնտեսությունների արտադրության մասնագիտացումից: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, հետազոտական կենտրոնների, սերմնաբուծարանների, ցուցադրական տնտեսությունների մասնակցությամբ կլաստերների գործարկումը հնարավորություն կտա առաջավոր տեխնոլոգիաների ներդրման և արտադրության ինտեսիվացման, որը մեծապես կնպաստի երկրում հացահատիկի ինքնաբավության մակարդակի բարձրացման:

- Շիրակի և Արագածոտնի մարզերում կաթի և կաթնամթերքի կլաստեր: Մարզերում գործում են շուրջ 13 միջին և համեմատաբար խոշոր կաթի վերամշակող ձեռնարկություններ, որոնք կարող են հանդիսանալ կլաստերի պոտենցիալ անդամներ:

- Տավուշի մարզում առաջարկվում է կիրառել խաղողի արտադրության արժեշղթայում կլաստերային մոտեցումներ: Մարզում խաղողագործության ճյուղի զարգացման հնարավորությունները կարող են տարածվել նաև հարևան մարզերի տնտեսավարողների վրա:

- Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի կլիման և աշխարհագրական դիրքը նպաստավոր են հեռանկարում զարգացնելու պտղաբուծությունը, մասնավորապես՝ կլաստերում առանցքային համարել արևադարձային մրգերի արտադրության և վերամշակման ներուժի առավելագույն օգտագործումը, այդ թվում՝ իրացման արդյունավետ ուղիների ներդրումը: Մարզում կլաստերների ձևավորումն ու գործարկումը կունենա ռազմավարական նշանակություն և կդիտարկվի ոչ միայն տնտեսական, այլ նաև բնակչության կոնսոլիդացման, միգրացիոն երևույթների մեղմման և գյուղական բնակչության կոլեկտիվ անվտանգության ապահովման միջոց:

5. Հարցումների անցկացում - ՀՀ-ում կլաստերային քաղաքականության ներդրման, կլաստերների ձևավորման անհրաժեշտության և գործունեության ծավալման շուրջ հետազոտական խումբը ձեռնամուխ է եղել հարցումների կազմակերպման և SWOT վերլուծության իրականացման (Հավելված 4): «ՀՀ-ում կլաստերիզացիայի գործընթացի վերաբերյալ» հարցմանը ներգրավվել են գյուղացիական (Ֆերմերային)



տնտեսությունները, վերամշակող, ներդրանքներ մատակարարող և արտահանող կազմակերպությունները, պետական կառավարման մարմինները և գիտակրթական կառույցները, թվով շուրջ 100 սուբյեկտների շրջանակներում՝ ընդգրկելով ՀՀ տարածաշրջանները:

Հարցման արդյունքները հետևյալն են.

Ակնհայտ տարբեր են մոտեցումները ՀՀ-ում տարվող ագրարային քաղաքականության և իրականացվող ծրագրային միջոցառումների վերաբերյալ: Հարցման մասնակիցների 94%-ը հետաքրքրված է ոլորտում վարվող քաղաքականությամբ և իրականացվող միջոցառումներով: Միաժամանակ նշում են, որ վարվող քաղաքականությունն իրենց չի գոհացնում և կարիք կա ագրարային օրենսդրության կատարելագործման, իսկ պետական աջակցության ծրագրերն ընդամենն ուղղված են մի քանի խնդիրների լուծմանը: Բացակայում է համակարգային մոտեցումը, առկա քաղաքականությունը չունի երկարաժամկետ բարեփոխումների բնույթ:

Ագրարային ոլորտի զարգացման գրավականներից է կրթություն – գիտություն – խորհրդատվություն - արտադրություն արդյունավետ համագործակցությունը:

Հարցվողների 95.7%-ը հնարավոր են համարում իրենց մասնակցությունը համագործակցության տարբեր ձևերին ինչպես կոոպերատիվին, այնպես էլ կլաստերին: Ըստ իրենց կլաստերային քաղաքականության




ներդրմամբ և կլաստերների լիարժեք գործարկմամբ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարողների համար կստեղծվի ներուժի արդյունավետ օգտագործման հարթակ:

ՀՀ ագրարային ոլորտում կլաստերային քաղաքականության ներդրումը ենթադրում է որոշակի սկզբունքների կիրառում: Հարցվողների 68%-ը կլաստերին անդամակցելու հիմնական սկզբունք է դիտարկել պետական աջակցությունը, 43%-ը՝ ինքնուրույնությունը, 46%-ը՝ առաջադիմությունը, իսկ 30%-ը՝ սիներգիկ էֆեկտը: Կլաստերի անդամակցության հիմնական նախապայմաններից և սկզբունքներից նշվում է շահերի տարբերակումը, քանի որ ձևավորվում է փոխշահավետ հարաբերություններ արտադրություն-սպառում ողջ շղթայով: Միևնույն ժամանակ հիմնական դրդապատճառը յուրաքանչյուր անդամի համար մնում է նույնը՝ սեփական շահը: Հարցումը վկայում է, որ տնտեսավարող սուբյեկտները պատրաստ են փոխշահավետ համագործակցության ներդրումային հիմնադրամների, լոգիստիկ կազմակերպությունների, մատակարարների, ոլորտի խոշոր արտադրողների և այլ սուբյեկտների հետ:

Հարցվողների 78%-ը գտնում է, որ կլաստերային մոտեցումների կիրառումը հնարավորություն է տալիս ամրապնդել գիտություն-կրթություն-արտադրություն կապը, լուծում տալ արտադրության ինտեսիվացման և ներդրումների ներգրավման (50%), արտադրանքի իրացման (56%) և այլ հարցերի: Կլաստերների գործարկման առավելությունների թվարկման շարքում հարցվողները ընդգծել են թիմային աշխատանքի մշակույթի ներդրման, ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ֆիքսված պայմանագրային հարաբերությունների ձևավորման և այլ խնդիրների լուծման հնարավորությունները:

ՀՀ-ում կարող են գործել ագրարային կլաստերների ձևավորման և գործունեության կառավարման 3 մոդել՝

1. կլաստերը ձևավորվում և կառավարվում է համեմատաբար խոշոր գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտը, վերամշակող ձեռնարկությունը, այդ թվում ոչ ռեզիդենտ,
2. կլաստերը նախաձեռնում և կառավարում է պետական կառավարման մարմինը,
3. կլաստերը ձևավորվում և կառավարվում է մասնավոր – պետական համագործակցությամբ և գործընկերությամբ:



Հարցվողների 67%-ը իր մասնակցությունը կլաստերում տեսնում է որպես անդամ, իսկ 33%-ը՝ նախաձեռնող: Ագրարային կլաստերների ձևավորման և գործունեության հարցում պետական հովանավորչությունը կարող է արտահայտվել տնտեսական և վարչական մեթոդներով՝ սուբսիդավորման, օրենսդրության ընդունման և

կատարելագործման, խորհրդատվության և տեղեկատվության տրամադրման, փորձուսուցումների միջոցով:

Հարցումների պատասխաններում հատուկ ընդգծվել է կլաստերային քաղաքականության, կլաստերների ձևավորման և գործունեության մասին օրենքի մշակումն ու ընդունումը որպես գործընթացի նախապայման: Այն կսահմանի կլաստերին անդամակցելու չափորոշիչները, սկզբունքները, քաղաքականության ուղղությունները, պետական աջակցության ձևերը և այլն: Կլաստերային քաղաքականության ներդրումը կարող է նպաստել գյուղատնտեսության նպատակներով օգտագործվող հողերի արդյունավետ օգտագործմանը, արտադրված արտադրանքի իրացմանը, նոր շուկաների հայտնաբերմանը, խնդիրներ, որոնց լուծմանը մինչ այժմ հնարավոր չի եղել հասնել գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով:

6. Կլաստերային քաղաքականության ամրագրման իրավօրենսդրական հիմքերը- ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման կլաստերային քաղաքականության իրականացումը բխվելու է օրենսդրական և նորմատիվ իրավական բազայի բացակայության հետ: Ուստի ՀՀ ագրարային օրենսդրության ամբողջականացման ու զարգացման առումով, հատկապես օրենքների նախագծերի մշակման ժամանակ, պետք է պարտադիր հաշվի առնել կլաստերային քաղաքականության ամրագրման հարցերը, ինչպես նաև ուշադրություն բևեռել կլաստերների ձևավորման մեթոդական և ուղեցույցային փաստաթղթերին:

Ուսումնասիրվել է կլաստերների ձևավորման իրավական փաստաթղթերով ապահովվածության հարցերը մի շարք երկրներում, ինչպես նաև ՀՀ օրենսդրական, իրավական և նորմատիվային ակտերը: Ըստ էության ՀՀ-ում ամբողջապես բացակայում են կլաստերներին վերաբերվող իրավանորմատիվային ակտերը: Անդրադարձ է կատարվել «Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի և «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի» նախագծերի ընդունման անհրաժեշտությանը:

«Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի նախագծում ներառվել է օգտագործվող հավանական և հիմնական հասկացություններին, ագրարային նորամուծական կլաստերի գործունեության իրավական կարգավորմանը, գործունեության իրականացման նպատակին և խնդիրներին, ագրարային նորամուծական կլաստերի ստեղծման և գործունեության ապահովման կառավարության լիազորություններին, «առաջնորդ» օղակի (կազմակերպության) գործառույթներին, կառավարման մարմիններին և ֆինանսական ապահովվածության հարցերին և այլն (Հավելված 5.):

«Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի» նախագծում ներկայացվել է համաձայնագրի առարկան, նպատակը, կլաստերի մասնակիցները, նրանց պարտավորությունները և համաձայնագրի ամփոփիչ դրույթները, որի մեջ ներառված են անդամակցության ժամկետները, համաձայնագրում փոփոխություններ կատարելու ընթացակարգը և այլն: Համաձայնագրի կնքումը կարող է տեղի ունենալ այն ժամանակ, երբ կլաստերի անդամ հանդիսացող կողմերը ստորագրում և կնքում են փաստաթուղթը (Հավելված 6.):

7. Կլաստերային քաղաքականության առաջնահերթություններն և ֆինանսավարկային հարաբերությունները- Կլաստերները կարող են հանդիսանալ արդյունավետ գործիք համագործակցության խորացման, հորիզոնական կապերի ամրապնդման, և որպես հետևանք, Եվրասիական տնտեսական տարածաշրջանում

ինտեգրացիոն գործընթացների շարժիչ:¹¹ Համատեղ նախագծերի իրականացումը, միջտարածաշրջանային կլաստերների զարգացումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհուսքը, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակումը հանդիսանում է արդյունավետ լծակ մարզերում ինտեգրացիոն գործընթացների և կլաստերային նախաձեռնությունների աշխուժացման համար:

Ներկայումս զարգացած երկրները, որպես կանոն, չեն նախաձեռնում կլաստերների ստեղծումը, այլ խթանում, ստեղծում են բարենպաստ միջավայր և ենթակառուցվածքներ, իրականացնում արդյունավետ հարկային, բյուջետային, վարկային և մաքսային քաղաքականություն:

Ենթադրվում է, որ կլաստերների զարգացման սկզբնական շրջանում, կառավարությունը պետք է ցուցաբերի նախաձեռնողականություն, իրականացնի ներդրումներ, միաժամանակ պայմաններ ստեղծի, որպեսզի հետագայում ֆինանսավորումը կրի «խառը բնույթ»՝ մասնավոր և պետական:

Կլաստերային քաղաքականության իրականացումը կախված է կառավարության առաջնահերթ նպատակներից և պետք է համապատասխանի ազգային կամ ընդհանուր տարածաշրջանային քաղաքականությանը: Օրինակ՝ Եվրոպական երկրներում կլաստերային քաղաքականության առաջնահերթություններն են՝ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ամրապնդումը, փոքր և միջին ձեռնարկությունների մրցունակության բարձրացումը, արդյունաբերության վերակառուցումը և միջազգայնացումը: Կլաստերների զարգացման ռազմավարական նպատակներն են հանդիսանում.

- համաշխարհային կարգի մրցունակ կլաստերների զարգացումը,
- ոլորտային և միջճյուղային արտադրության արդիականացման աջակցությունը,
- ձեռնարկատիրության զարգացումը այն ոլորտներում, որոնք ունեն դինամիկ աճման ներուժ,
- կլաստերներին ՓՄՁ-ների մասնակցության հասանելիության բարելավումը և գործունեության ձևերի միջազգայնացումը,

¹¹ Состояние кластерного развития в государствах-участниках ЕАБР, центр интеграционных исследований, /www.eabr.org/ Евразийский банк развития, Август 2019, с.36

- ռազմավարական խնդիրների շուրջ միջտարածաշրջանային համագործակցության ակտիվացումը և ներդրումային գրավչության բարձրացումը:

Միջազգային փորձի ուսումնասիրության (Հավելված 2) արդյունքները վկայում են, որ ՀՀ-ում կլաստերային մոտեցումների կիրառման և գործունեության ծավալման համար անհրաժեշտ կլինի ուշադրություն բևեռել բյուջետային, հարկային, վարկային և մաքսային համապատասխան քաղաքականության մշակման վրա:

Կլաստերները հանդիսանում են ռազմավարական կարևոր ոլորտների զարգացման գործիք և կարևոր դերակատարություն ունեն տարածաշրջանի տնտեսական զարգացման ապահովման գործում: Ուստի անհրաժեշտ է ՀՀ-ում ագրարային ոլորտում կլաստերների ձևավորման և հետագա զարգացման համար մշակել կլաստերին, մասնակիցներին հատուկ ֆինանսավարկային համակարգ, հարկային որոշակի արտոնություններ, մասնավորապես կիրառել աջակցման միջազգայնորեն ընդունված չափորոշիչներ:

ՀՀ ագրարային ոլորտում կլաստերային ծրագրերի ֆինանսավորման կարևոր աղբյուրները կարող են հանդիսանալ ԵԱՏՄ, Եվրոպական, ազգային, տարածաշրջանային ծրագրերը և մասնավոր հիմնադրամների միջոցները:

Ագրարային կլաստերի մասնակիցներին կարող է տրամադրվել ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, կադրային ներուժի զարգացման և վերապատրաստման աջակցություն, ինչպես նաև կարող են ներառվել սերմնապահովման (հատկապես հացահատիկային տնտեսություններին), ֆինանսական վարձակալության (լիզինգի), նորարարական տեխնոլոգիաների ներդրման, արժեշրթանների արդյունավետության բարձրացման և այլ աջակցության ձևեր: Գյուղատնտեսությունում կլաստերների ձևավորման և արդյունավետ գործունեության պետական աջակցությունը կարող է իրականացվել ձևավորվող օրենսդրության շրջանակներում և պետական ծրագրերով, որի մշակման և հաստատման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից, դրամաշնորհներից, օրենքով չարգելված այլ աղբյուրներից, ընդ որում կարող է ներառվել լիազորված պետական կառավարման

մարմնի բյուջեում առանձին տողով: Օրենքում կսահմանվի մշտադիտարկման մեխանիզմներ, ընթացիկ և ավարտական հաշվետվությունների լսում՝ ծրագրի իրականացման բոլոր փուլերում և մակարդակներում: Կլաստերային մոտեցումների կիրառման աջակցության կազմակերպման և հաշվետվողականության համանման կարգ կարող է գործել նաև գյուղական տարածաշրջանների կտրվածքով:

« Կլաստերային ծրագրերի աջակցությունը հիմնականում պետք է իրականացվի.

1. « տարածաշրջանների և հատկապես՝ սահմանային, ինովացիոն և ներդրումային միջավայրի բարելավման շրջանակներում,
2. Գյուղական բնակչության կոլեկտիվ անվտանգության ապահովման նպատակներից ելնելով,
3. Ներգրավված սուբյեկտների ֆինանսատնտեսական գործունեության բարելավման նպատակով:

Ագրարային կլաստերի մասնակիցներին համատեղ նորարական նախագծերի իրականացման համար բացի սուբսիդիաներից կարող են տրամադրվել նաև հարկային որոշակի արտոնություններ:

Ագրարային կլաստերի մասնակիցների համար հարկային արտոնություններ, համատեղ նորարական նախագծերի իրականացման դեպքում.

- 0% - գույքահարկի դրույքաչափ առաջին 5 տարվա կտրվածքով գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների համար,
- 0% - հողի հարկի դրույքաչափ առաջին 5 տարվա կտրվածքով գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունների և գյուղատնտեսական կոոպերատիվների համար,
- 10% - շահութահարկի դրույքաչափ առաջին 5 տարվա կտրվածքով վերամշակող կազմակերպությունների համար:

Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում բացակայում է կլաստերների ձևավորմանը նպաստելու բաղադրիչ:

Օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ՀՀ-ում ընդունել կլաստերային զարգացման հայեցակարգ, առաջիկայում վերանայել պետական աջակցության ծրագրերը և նրանց մի մասն ուղղորդել կլաստերային սկզբունքների, մոտեցումների կիրառմանը և նախաձեռնությունների ակտիվացմանը:

ՀՀ ագրարային հատվածում կլաստերային զարգացման հայեցակարգը ենթադրում է տարածաշրջաններում միմյանց հետ փոխկապակցված կառույցների գործունեության կենտրոնացվածություն՝ լինեն դրանք գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվողներ (գյուղացիական տնտեսություններ, իրավաբանական անձ հանդիսացողներ), գիտակրթական հաստատություններ, տարածքային կառավարման մարմիններ, մատակարարներ, սպասարկում իրականացնողներ և այլն:

Ընդգծենք, որ կլաստերային ծրագրերի ներդրման քաղաքականությունը բոլոր երկրների համար, չի կարող լինել համընդհանուր և միասնական: Հայաստանի համար կարելի է ընտրել ռազմավարական նշանակության, գործնական նախաձեռնությունների լավագույն դրսևորումների, համախմբված և ինտեգրված գործելակերպի երաշխավորություններ ապահովող կլաստերային մոտեցումները:

ՀՀ գյուղատնտեսությունում կլաստերային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հատկապես արդյունաբերական բնույթի գյուղատնտեսության և տարածքային ինովացիոն կլաստերների ձևավորմանն աջակցելուն, ընդ որում այն տնտեսավարող սուբյեկտներին, որոնք լիարժեքորեն ներգրավված են ագրարային շուկայում և նպատակ ունեն ապահովել ապրանքայնության բարձր մակարդակ: Նման կլաստերները կարող են լինել ճյուղային մասնագիտացման և պետական կարգավորման ենթակա, այսինքն՝ որպես աջակցության օբյեկտ է ընտրվում պետության կողմից:

Վետազոտության արդյունքներով մշակել և առաջարկվում է ՀՀ-ում կլաստերային քաղաքականության ներդրման ճանապարհային քարտեզի նախագիծ (Հավելված 7): Կլաստերային քաղաքականության ներդրման առաջարկվող ճանապարհային քարտեզի ձևաչափը կարող է ենթարկվել փոփոխության՝ ներառելով կատարման ժամկետները, յուրաքանչյուր միջոցառման տեխնիկոտնտեսական հիմնավորվածությունը, պահանջվող ֆինանսական միջոցները:


Թեմայի շրջանակներում մշակվել է «Ագրարային կլաստերների զարգացման ծրագրի» տիպային կառուցվածք, որը իր կիրառությունը կարող է գտնել հանրապետության պայմաններում (Հավելված 8):

8. Կլաստերային քաղաքականության ազդեցությունը ներդրումային միջավայրի վրա - Կլաստերային քաղաքականության ազդեցությունն ագրարային ոլորտում շոշափելի կարող է լինել հատկապես կապիտալ ներդրումների ակտիվացման և ինովացիոն տեխնոլոգիաների ներգրավման հարցերում:

Կլաստերային քաղաքականությունը պետք է միտված լինի բիզնես-կառույցների ներգրավմանը և դրանց գործունեության օպտիմալացմանը (ավելացված արժեքի ստեղծում, ներմուծման փոխարինում, արտադրության տեղայնացում, հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացում)՝ ի հաշիվ պետություն-մասնավոր գործընկերության ամրապնդման և մասնավոր ու օտարերկրյա ներդրողների մասնակցության:

Կլաստերային քաղաքականության նպատակները պետք է լինեն՝ պարենային արժեշիջանների երկայնքով բոլոր օղակների մրցունակության խթանումն ու նորարարական ներուժի արդյունավետ օգտագործումը, փոքր և միջին բիզնեսի զարգացումը:

Կլաստերային նախաձեռնությունների իրականացման ընթացքում ներդրումային գործունեությունը կարող է կազմակերպվել երկու մակարդակով.



Գձ.1. Կլաստերային նախաձեռնություններում ներդրումային գործունեության կազմակերպման մակարդակները

³³ Սանդղակը մշակվել է ելնելով կոռելյացիայի և դետերմինացիայի, կառուցված մոդելների նշանակալիության միջոցով, մասնավորապես առավելագույնը գնահատվել է 1 ($R=0.98-0.99$, $R^2=0.97-0.99$, $t_{բերք}> 10$), նվազագույնը 5 կամ 6 ($R=0.89-0.91$, $R^2=0.59-0.79$, $t_{բերք}> 3$)

ՀԱՎԵԼՎԱԾ 4
Կլաստերների ձևավորման և ներդրման «SWOT» վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> • Ռեսուրսային ներուժ • Մարզերի մասնագիտացում և հողերի ուղղագիծ գոտիկականություն • Նույն մասնագիտացում ունեցող մարզերի աշխարհագրորեն մոտ գտնվելու հանգամանք • Պոտենցիալ սուբյեկտների համաձայնեցված գործունեության պատրաստակամություն • Պարենային արժեչղթաների օղակների միջև պայմանագրային կամ համաձայնագրերով համագործակցության ստեղծում • Տնտեսավարող սուբյեկտների հնվացիոն տեխնոլոգիանների ներդրման հնարավորությունների ավելացում 	<ul style="list-style-type: none"> • Ոլորտային իրավաօրենսդրական դաշտի բացակայություն • Համագործակցության մշակույթի բացակայություն • Անհրաժեշտ ենթակառուցվածքների անկատարություն • Հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ցածր մակարդակ • Գյուղացիական տնտեսությունների փոքր չափեր • Սահմանամերձ համայնքների մեծ թիվ
Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> • Համապատասխան օրենսդրության մշակում • Ճանապարհային քարտեզի առաջադրում • Սահմանամերձ համայնքներում անվտանգության երաշխիքների ապահովում • Սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում և գյուղական համայնքներում կենսամակարդակի բարձրացում • Ներդրումային միջացվայրի բարելավում • Պետական աջակցության ծրագրերի մասնակցություն 	<ul style="list-style-type: none"> • Աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունը • ԵԱՏՄ համաձայնեցված ագրարային քաղաքականության նպատակների և միջոցառումների փոփոխություն

ՀԱՎԵԼՎԱԾ 5
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԿԼԱՍՏԵՐԻ ՄԱՍԻՆ

Սույն օրենքը կարգավորում է իրավահարաբերությունները, որոնք առաջանում են նորամուծական ագրարային կլաստերի ստեղծման և գործունեության իրականացման բնագավառում

Հոդված 1. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1. **ագրարային նորամուծական կլաստեր՝** կլաստերի գործունեության սուբյեկտ հանդիսացող մասնակիցների համագործակցություն՝ գյուղատնտեսության, արդյունաբերության, գիտության, կրթության, տրանսպորտի, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության ենթակառուցվածքի և այլ ոլորտների, որոնք սահմանվում են ՀՀ կառավարության կողմից,
2. **կլաստերի մասնակից՝** ֆերմերային տնտեսություն, իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, գիտահետազոտական կառույցներ և այլ կազմակերպություններ,
3. **կլաստերի հիմնադրամ՝** ոչ առևտրային կազմակերպություն, որը ստեղծվում է կառավարության կողմից, որի նպատակն է ֆինանսական աջակցություն ցուցաբերել ագրարային ոլորտում նորամուծական նախագծերի իրականացմանը,
4. **ոլորտային (միջճյուղային) կլաստեր՝** կլաստերի մասնակիցների համագործակցություն, որոնք միավորվում են ագրարային ոլորտում համատեղ նորամուծական նախագծեր իրականացնելու համար:

Հոդված 2. Ագրարային նորամուծական կլաստերի գործունեության իրավական կարգավորում

Կլաստերային գործունեության իրավական կարգավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, սույն օրենքով, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքով 5 դեկտեմբերի 2000թ, «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով 23 մայիսի 2006թ, «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքով 25 մայիսի 2011 թվականի և օրենսդրական այլ ակտերով:

Հոդված 3. Ագրարային նորամուծական կլաստերի գործունեության իրականացման նպատակը և խնդիրները

Կլաստերը ստեղծվում է ՀՀ տարածքում պարենային անվտանգության ապահովման, ագրարային ոլորտում նորարարական տեխնոլոգիաների մշակման և ներդրման, գիտատեխնիկական և արտադրական կոոպերացիայի ապահովման, կլաստերի մասնակիցների գործունեության կոորդինացման նպատակով և ֆերմերային տնտեսությունների մրցունակության բարձրացման նպատակով: Կլաստերի գործունեության խնդիրներն են.

1. կլաստերի մասնակիցների խթանումը և անհրաժեշտ պայմանների ստեղծումը գյուղատնտեսական մթերքների արտադրության և արտահանման ծավալների ավելացման,
2. օրգանական գյուղատնտեսության զարգացման, բուսաբուծության ոլորտում ագրոտեխնիկական առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, սելեկցիայի և սերմնաբուծության համակարգի զարգացման,
3. կլաստերի մասնակիցներին աջակցության ցուցաբերում, օրենքով սահմանված կարգով, ինտելեկտուալ գործունեության արդյունքների սեփականության իրավունքի գրանցում,
4. կլաստերի մասնակիցներին նորամուծական գործունեության արդյունքներին առևտրայնացման աջակցություն,
5. ներդրումային աջակցություն կլաստերի մասնակիցներին տեխնիկական վերազինման և սարքավորումների նորացման,
6. կլաստերի մասնակիցների կադրային պոտենցիալի զարգացում,
7. գյուղատնտեսական մթերքների իրացման մեխանիզմների կատարելագործում, համապատասխան ենթակառուցվածքների զարգացում,
8. ագրարային ոլորտում նորարարական տեխնոլոգիաների ներդրման աջակցություն:

Հոդված 4. Կառավարության լիազորությունները ագրարային նորամուծական կլաստերի ստեղծման և գործունեության ապահովման բնագավառում

ՀՀ կառավարության լիազորությունները.

1. որոշում է ագրարային կլաստերի մասնակիցների գործունեության բնագավառները,
2. իրականացնում է կլաստերի հիմնադրամի գործառույթները և լիազորությունները,
3. հաստատում է ագրարային կլաստերի մասնակցության կարգը և պայմանները, կլաստերի մասնակիցների ընտրությանը ներկայացվող պահանջները և չափորոշիչները,

4. հաստատում է միջոլորտային կլաստերի կարգավիճակի ստեղծման և դադարեցման կարգը,
5. որոշում է կլաստերի մասնակիցներին տրվող աջակցության միջոցառումների ցանկը,
6. սահմանում է նորանուծական նախագծերի ընտրությանը ներկայացվող չափանիշները և կարգը, դրանց իրականացման ֆինանսական ապահովվածությունը, որը իրականացվելու է կլաստերի հիմնադրամկողմից,
7. հաստատում է կլաստերի մասնակիցների գործունեության արդյունավետության գնահատման հիմնական ցուցանիշները և արդյունքային ցուցանիշների հասնելու հսկողության իրականացման կարգը,
8. ապահովում է կլաստերի հիմնադրամի ֆինանսական աջակցություն պետական բյուջեի միջոցների հաշվին,
9. ապահովում է կլաստերի գործունեության իրականացման տեղեկատվական համակարգը,
10. իրականացնում է օրենքով սահմանված կարգով այլ լիազորություններ:

Հոդված 5. Կլաստերի հիմնադրամի գործառույթները.

1. կլաստերի գործունեության մեթոդական, կազմակերպական, փորձագիտական, վերլուծական և տեղեկատվական ապահովվածություն,
2. կլաստերի ստեղծման և գործունեության դադարեցման կարգավիճակի հաստատում,
3. սահմանում է կլաստերի գրանցամատյանի վարման կարգը և ձևը, կլաստերի մասնակիցների գրանցամատյանի վարման կարգը,
4. ապահովում է կլաստերի մասնակիցների փոխազդեցության կոորդինացում,
5. հաստատում է ագրարային ոլորտում նորարարական գործունեության ուղղվածությունը,
6. նորարարական նախագծերի ընտրության իրականացումը կլաստերի հիմնադրամի կողմից, այդ թվում նորարարական նախագծերի ֆինանսական աջակցություն, որը պետք է իրականացվի կլաստերի հիմնադրամի կողմից, ընդգրկելով նախագծերի համալիր փորձաքննություն,
7. ագրարային ոլորտում նորարարական նախագծերի իրականացման ֆինանսական ապահովվածություն կլաստերի մասնակիցներին դրամաշնորհ տրամադրելու միջոցով,
8. նորարարական նախագծի իրականացման յուրաքանչյուր փուլում վերահսկողության իրականացում հիմնադրամի կողմից,
9. տարեկան հաշվետվության ներկայացում իր գործունեության մասին:

Հոդված 6. Կլաստերի հիմնադրամի կառավարման մարմինները

Կլաստերի հիմնադրամի կառավարման մարմիններ են հանդիսանում՝ վերահսկիչ խորհուրդը, գործադիր մարմինը, համակարգող խորհուրդը և խորհրդի նախագահ:

1. Վերահսկիչ խորհուրդը հանդիսանում է կլաստերի հիմնադրամի կառավարման վերադաս մարմինը:
2. Խորհրդի նախագահը իրականացնում է կլաստերի հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարում: Խորհրդի նախագահը նշանակվում է պաշտոնի և ազատվում է պաշտոնից կառավարության կողմից:
3. Կլաստերի հիմնադրամի կառավարման մարմինների ստեղծման կարգը, գործառույթները և լիազորությունները որոշվում է կառավարության կողմից և կլաստերի հիմնադրամի կանոնադրությամբ:

Հոդված 7. Կլաստերի հիմնադրամի համակարգող խորհուրդը

Համակարգող խորհուրդը իրականացնում է հսկողություն կլաստերի հիմնադրամի գործունեության և կլաստերի հիմնադրամի այլ մարմինների կողմից ընդունված որոշումները պատշաճ մակարդակով իրականացման, օգտագործելով հիմնադրամի միջոցները, օրենքով սահմանված կարգով և կլաստերի հիմնադրամի կանոնադրությանը համապատասխան:

Համակարգող խորհրդի ստեղծման և գործունեության իրականացման կարգը որոշվում է կլաստերի հիմնադրամի կանոնադրությամբ:

Հոդված 8. Կլաստերի հիմնադրամի փորձագիտական մարմինները

Նորարարական նախագծերի համալիր փորձաքննություն կազմակերպելու նպատակով, ինչպես նաև նախագծերի կատարման յուրաքանչյուր փուլի և վերջնական արդյունքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար ստեղծվում է փորձագիտական հանձնաժողով: Փորձագիտական հանձնաժողովը հանդիսանում է մշտապես գործող փորձագիտական, խորհրդատվական մարմին և ստեղծվում է պրոֆեսիոնալ մասնագետների կողմից, որոնք իրականացնում են գործունեություն գյուղատնտեսության, արդյունաբերության, գիտության, կրթության, տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլ ոլորտներում ոչ պակաս քան 5 տարի: Փորձագիտական հանձնաժողովի գործառույթները, կազմը, մասնակիցներին ներկայացվող պահանջները որոշվում է կլաստերի հիմնադրամի կանոնադրությամբ:

Կլաստերի հիմնադրամի կառուցվածքում կարող են ստեղծվել այլ փորձագիտական հանձնաժողովներ, որոնց գործառույթները, կազմը, մասնակիցներին ներկայացվող պահանջները որոշվում է կլաստերի հիմնադրամի կանոնադրությամբ:

Հոդված 9. Կլաստերի հիմնադրամի ֆինանսական գործունեության ապահովվածությունը

Ֆինանսական ապահովվածությունը կլաստերի հիմնադրամի իրականացվում է սեփական միջոցների հաշվին, պետական բյուջեի միջոցների հաշվին, ինչպես նաև այլ աղբյուրներից, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոդված 10. Ագրարային նորամուծական կլաստերի մասնակից: Միջոլորտային կլաստեր

Գյուղացիական (ֆերմերային) տնտեսությունը, իրավաբանական անձը, անհատ ձեռնարակատերը և այլ շահագրգիռ սուբյեկտները ստանում են կլաստերի մասնակցի կարգավիճակ՝ գրանցամատյանում գրանցվելուց հետո:

Կլաստերի մասնակցի իրավունքները.

1. Նախագծերի իրականացման աջակցություն ստանալու նպատակով դիմել կլաստերի հիմնադրամին:
2. Առաջարկություններ ներկայացնել նորամուծական նախագծերի փոփոխության վերաբերյալ,
3. Մասնակցել կլաստերի ստեղծման աշխատանքներին,
4. Հարցում կատարել և ստանալ տեղեկատվություն կլաստերի գործունեության, հիմնադրամի, մասնակիցների մասին, բացառությամբ այն տեղեկատվությանը, որը հանդիսանում է պետական, հարկային, առևտրային կամ այլ օրենքով պաշտպանված գաղտնիք,
5. օգտվել կլաստերի գործունեության տեղեկատվական ապահովման համակարգից, սուբյեկտների միջև ավտոմատացված տեղեկատվության փոխանակման հնարավորությունից:

Կլաստերի մասնակցի պարտականությունները.

1. անմիջական մասնակցություն ունենալ նորամուծական նախագծերին կամ նպաստել դրանց իրականացմանը,
2. ապահովել կլաստերի մասնակիցների գործունեության արդյունավետությունը,
3. կլաստերի հիմնադրամին ներկայացնել ճշգրիտ տեղեկատվություն սուբյեկտների մասին:

Կլաստերի մասնակիցը ունի այլ իրավունքներ և պարտականություններ, որոնք նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով և նորմատիվ իրավական ակտերով:

Կլաստերի գործունեության դադարեցումը չի ենթադրում սուբյեկտների գործունեության դադարեցում:

Հոդված 11. Ագրարային նորամուծական կլաստերի մասնակցի աջակցությունը

1. Կլաստերի մասնակցին կարող է տրամադրվել ֆինանսական, տեղեկատվական, խորհրդատվական, կադրային պոտենցիալի զարգացման և վերապատրաստման աջակցություն, ինչպես նաև օժանդակության այլ ձևեր, որոնք նախատեսված են ՀՀ օրենսդրությամբ:
2. Կլաստերի մասնակցին ֆինանսական աջակցություն տրամադրվում է կլաստերի հիմնադրամի կողմից դրամաշնորհների միջոցով և այլ ձևերով:

Հոդված 12. Կլաստերի գործունեության տեղեկատվական ապահովման համակարգ

Կլաստերի գործունեության տեղեկատվական ապահովման համակարգը ստեղծվում է կլաստերի բնականոն գործունեության իրականացման համար. տվյալների ավտոմատ կերպով հավաքագրման, մշակման, պահպանման, տվյալների վերլուծության, օպերատիվ ձևով ըստ նշանակության կիրառման: Տեղեկատվական ապահովման համակարգը կլաստերի մասնակիցների միջև անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն ստանալու և փոխանակելու հնարավորություն է ստեղծում:

ՀԱՎԵԼՎԱԾ 6 ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Կլաստերի սուբյեկտներ - Ներկայացվում են այն մասնակիցները, որոնք պատրաստվում են դառնալ կլաստերի անդամ և սույն համաձայնագրի մասնակից:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կլաստերի ստեղծման համաձայնագրի առարկան ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող Կողմերի ռազմավարական համագործակցություն է:

1.2 Համաձայնագրի նպատակների տեսանկյունից՝ կլաստերային նախաձեռնության տակ հասկացվում է Կողմերի կոորդինացված գործողություններ, որոնք ուղղված են արդյունավետ և նպատակային գործունեության, անդամների մրցունակության բարձրացման, նոր մասնակիցների ներգրավման, իրացման գործընթացի բարելավման և այլն:

1.3 Կլաստերը ոչ առևտրային կազմակերպություն է և չունի իրավաբանական անձի կարգավիճակ:

2. Համաձայնագրի նպատակը

2.1 Կլաստերը, զարգացմամբ և համատեղ նախագծերի իրականացմամբ, մասնակիցների միջև (առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ներդրողների, կոոպերատիվների, գիտահետազոտական և կրթական կենտրոնների, ինչպես նաև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների) արդյունավետ համագործակցության պայմանների ստեղծումն է:

2.2 Կլաստերում մրցունակ մատակարարների և սպասարկող ձեռնարկությունների կամ կոոպերատիվների ներգրավում կամ ստեղծում:

2.3 Կլաստերի մասնակիցների եկամուտների կայունացում և արդյունավետության բարձրացում:

2.4 Ինովացիոն տեխնոլոգիաների կիրառում:

2.5 Փոքր և միջին վերամշակող ձեռնարկությունների ներգրավման միջոցով կոոպերատիվների ստեղծում և կլաստերում ներգրավում:

2.6 Կլաստերի մասնակից-կազմակերպությունների ռեսուրսների նպատակային օգտագործման մակարդակի բարձրացում, արտադրանքի իրացման խնդիրների մեղմում, արտադրանքի որակի կատարելագործմամբ՝ մրցունակության բարձրացում, ծախսերի կրճատում և արտահանման հնարավորությունների ընդլայնում:

2.7 Կլաստերում բարձրորակ աշխատուժի ներգրավում, ինչպես նաև շարունակական ուսուցման և խորհրդատվությունների միջոցով մասնագետների որակավորման բարձրացում:

3. Կլաստերի մասնակիցները

3.1 Կլաստերի մասնակիցներ են հանդիսանում գյուղացիական տնտեսությունները, իրավաբանական անձինք, միջազգային կազմակերպությունները, գիտահետազոտական և կրթական կառույցները, կոոպերատիվները և այլն, որոնք շահագրգռված կլինեն կլաստերի ստեղծմամբ՝ համատեղ խնդիրների լուծման, կիրականացնեն համաձայնագրի դրույթները, քաղաքականությունը, կկատարեն կլաստերի մասնակիցների ժողովի որոշումները:

3.2. Կլաստերի մասնակից կարող են լինել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք իրավասու են կատարել առաջարկներ.

- ✓ կլաստերի ձևավորման և զարգացման,
- ✓ ներդրումային ռեսուրսների ներգրավման և այլն:

Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները կընդգրկվեն կլաստերի սուբյեկտների ընդհանուր ժողովում:

3.3 Համաձայնագրի ստորագրումից հետո կողմերը կդառնան կլաստերի լիարժեք անդամ:

3.4 Կլաստերի մասնակիցները կպահպանեն կազմակերպչական, ֆինանսական և տնտեսական լրիվ ինքնուրույնությունը:

3.5 Կլաստերը բաց կլինի նոր գործարքների և նոր գործընկերների (մասնակիցների) համար: Նոր գործընկերների կլաստերի անդամակցության համար անհրաժեշտ կլինի նոր հանաձայնագրի կնքում, կողմերի պարտավորությունների հստակեցում, ինչպես նաև մասնակիցների համաձայնեցում՝ նոր անդամի կլաստերին անդամակցության վերաբերյալ:

3.6 Կլաստերի մասնակիցները պարտավորվում են նպաստել կլաստերի զարգացմանը և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կհակասեն կլաստերի նպատակներին և խնդիրներին:

3.7 Կլաստերի կառավարման գործառույթները դրվում են համապատասխան խորհրդի (օրինակ կլաստերի գործունեությունը համակարգող խորհուրդ) վրա:

4. Ամփոփիչ դրույթներ

4.1 Համաձայնագիրը կնքվում է անորոշ (որոշակի) ժամանակով և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրումից հետո:

4.2 Համաձայնագրի պայմանները գաղտնի տեղեկատվություն չեն և հասու են

կլաստերի անդամ հանդիսացող և չհանդիսացող կազմակերպություններին:

4.3 Համաձայնագրում փոփոխություններ կատարելն իրականացվում է գրավոր կերպով՝ կլաստերի անդամների փոխադարձ համաձայնությամբ: Նման փոփոխություններն ու լրացումները կատարվում են սույն համաձայնագրին կից նոր լրացուցիչ համաձայնագրի միջոցով, որը լրացնում է հիմնականին և առանց հիմնական համաձայնագրի անօրինական է համարվում: Փոփոխություններ առաջարկող կարող են հանդիսանալ կլաստերի ցանկացած անդամ:

4.4 Համաձայնագրի կատարման ընթացքում առաջ եկող վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել քննարկումների և բանակցությունների միջոցով: Հակառակ դեպքում երկրում գործող օրենքների և օրենսդրական ակտերով:

Կլաստերի անդամ հանդիսացող կողմերի ստորագրությունն ու կնիքը:

ՀԱՎԵԼՎԱԾ 7

Կլաստերային քաղաքականության ներդրման առաջարկվող ճանապարհային քարտեզ

2022-2026թթ

N	Միջոցառումներ	Սպասվելիք արդյունքներ	Պատասխանատուներ և մասնակիցներ
Գերակայություն 1. Օրենսդրական փաստաթղթերի մշակումը			
1.1	Հայեցակարգի մշակում	Կլաստերային քաղաքականության հայեցակարգի մշակում, որի շրջանակներում անհրաժեշտ է ներկայացնել ընդհանուր դրույթները, սահմանել հիմնական նպատակները, մշակել մոտեցումներն ու մեթոդները, վեր հանել առկա վիճակի բնութագիրը և խնդիրները, դրանց լուծման հնարավոր ուղղությունները, ներկայացնել հայեցակարգի առավելությունները և ֆինանսական գնահատումը:	ՀՀ կառավարություն, գիտական հասարակական կառույցներ
1.2.	Օրենքների նախագծերի մշակում և ընդունում	«ՀՀ-ում ագրոկլաստերների զարգացման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ներդրում, որի շրջանակներում տրված/ներկայացված կլինեն կլաստերի հիմնական հասկացությունները, նպատակը և խնդիրները, կարգավորման առարկան, գործողության ոլորտը, պատասխանատուները և այլ դրույթներ: «Ագրարային նորամուծական կլաստերի մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում և ընդունում: Օրենքի նախագծում տրված/ներկայացված կլինեն օգտագործվող հիմնական հասկացությունները, կլաստերի գործունեության իրավական կարգավորումները, գործունեության իրականացման նպատակները ու խնդիրները, ստեղծման և գործունեության ապահովման կառավարության լիազորությունները, կլաստերի հիմնադրամգործառույթները, կառավարման մարմինները, ֆինանսական ապահովվածությունը և այլն:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային Ժողով
1.2.1	Պետական աջակցության ծրագրի մշակում և ընդունում	Գյուղատնտեսությունում կլաստերների ձևավորման և արդյունավետ գործունեության պետական աջակցությունը կարող է իրականացվել պետական ծրագրերով, որի մշակման և հաստատման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեից, դրամաշնորհներից, օրենքով չարգելված այլ աղբյուրներից, ընդ որում կարող է ներառվել լիազորված պետական կառավարման մարմնի բյուջեում՝ առանձին տողով: Օրենքում կսահմանվի մշտադիտարկման կառուցակարգերը, ընթացիկ և ավարտական հաշվետվությունների ձևաչափը, ցուցանիշների համակարգը:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն կամ ճյուղային նախարարություն
Գերակայություն 2. Կլաստերի սուբյեկտների միջև համագործակցության ձևերը			
2.1	Կլաստերային	Կլաստերների ներդրման մեթոդական հանձնարարականների շրջանակներում	Կլաստերի խորհուրդ,

	մոտեցումների ներդրման մեթոդական կանոնակարգերի, հանձնարարականների և հրահանգների մշակում և ընդունում	կանոնակարգի, սուբյեկտների միջև համաձայնագրերի և պայմանագրերի նախագծերի մշակում և ընդունում: Մասնավորապես՝ «Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների և կլաստերային նախաձեռնություն իրականացնող սուբյեկտների միջև ռազմավարական համագործակցության համաձայնագրի» մշակում և ներդրում, որտեղ ներկայացված/տրված կլինի համաձայնագրի առարկան, նպատակը, կլաստերի մասնակիցները, նրանց պարտավորությունները և ամփոփ դրույթները (անդամակցության ժամկետները, համաձայնագրում փոփոխություններ կատարելու ընթացակարգը և այլ դրույթներ):	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողով
Գերակայություն 3. Կլաստերային քաղաքականության ներդրման շուրջ քննարկումների կազմակերպման կարգը			
3.1	Հանրային քննարկումների կազմակերպում շահագրգիռ կողմերի մասնակցությամբ	Հանրային քննարկումների կազմակերպման արդյունքում կներկայացվի կլաստերի գաղափարը, անդամակցության պայմանները, իրականացվող կլաստերային քաղաքականության ծրագիրը և միջոցառումների ցանկը, ինչպես նաև հանրային խորհրդի եզրակացության հիման վրա կձեռնարկվի հայեցակարգի և ծրագրերի անհրաժեշտ լրամշակման աշխատանքները:	Կառավարման կենտրոնական և տարածքային մարմիններ, ագրոպարենային համակարգի սուբյեկտներ, հասարակական կազմակերպություններ, գիտակրթական կառույցներ
Գերակայություն 4. Խորհրդատվությունների տրամադրումը և ուսուցումների կազմակերպումը			
4.1	Խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում	Ֆոկուս խմբերի կազմում և մարզային այցերի կազմակերպում, որի շրջանակներում կտրամադրվեն խորհրդատվություններ և տեղեկատվություններ տարբեր տնտեսավարող սուբյեկտներին (գյուղացիական տնտեսություններ, վերամշակող կազմակերպություններ, գիտահետազոտական կառույցներ և այլն)՝ կլաստերների, դրա ձևավորման սկզբունքների, առավելությունների, անդամակցության պայմանների, կլաստերային քաղաքականության և այլնի վերաբերյալ: Տեղեկատվություն կարող է տրամադրվել նաև տարբեր էլեկտրոնային հարթակների օգնությամբ: Կլաստերների ձևավորման և գործարկման տեղեկատվական թերթիկների մշակում և տարածում:	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Գիտակրթական կառույցներ
4.2	Մասնագիտական գրականության բազայի ստեղծում և ապահովում	Կլաստերային քաղաքականության արդյունավետ ներդրման համար անհրաժեշտ մասնագիտական գրականության բազայի, ընդհանուր հարթակի ստեղծում և նյութերի ներբեռնում:	Կլաստերի քարտուղարություն
4.3	Դասընթացների կազմակերպում և	Հանրային քննարկումների և մարզային այցերի ու հանդիպումների ընթացքում կազմել համապատասխան ուսուցման պլաններ. խմբերի կազմում, անդամների գործառույթների	ՀԱԱՀ, կլաստերի խորհուրդ, մարզային

	մասնակիցների վերապատրաստում	սահմանում, իրականացվող աշխատանքային պլանի մշակում, պլանի կատարման ժամանակացույցի սահմանում, կատարման մեխանիզմների որոշում և իրականացում: ՀԱԱՀ ուսումնական պլաններում ներառել «Կլաստերային քաղաքականություն» առարկան, իսկ ոչ մասնագիտական կրթական ծրագրերում՝ որպես առանձին թեմա: Կլաստերին անդամակցելու նպատակով հավանական մասնակիցների վերապատրաստում ինչպես ՀԱԱՀ-ում, այնպես էլ ոլորտի գիտական կենտրոններում:	գիտակրթական և հասարակական կառույցներ
Գերակայություն 5. Կլաստերների ձևավորումը և վերահսկողությունը			
5.1	Կլաստերի տիպային և ցուցադրական մոդելների առաջադրում ներդրում	և Տիպային մոդելը կարող է բաղկացած լինել մի քանի բլոկներից, որոնցում պարտադիր պետք է ներառված լինեն պարենային արժեշրջանների բոլոր սուբյեկտները, ինչպես նաև գիտակրթական կառույցները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ֆինանսական կառույցները և այլն: Որպես տիպային մոդելներ կարող են դիտարկվել Արմավիրի և Արարատի մարզերում «Պտուղ բանջարեղենի արտադրության» և Տավուշի մարզում ցորենի արժեշրջայի «գիտակրթախորհրդատվական» կլաստերները: Կլաստերների ցուցադրական մոդելի ներդրումը հնարավորություն կտա առանձին տարածաշրջաններում, մարզերում առկա ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը: Մոդելի ներդրումը կարելի է իրականացնել փուլային եղանակով:	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Գիտահետազոտական և հասարակական կառույցներ, ՀՀ կառավարություն
5.2	Մոնիթորինգ գնահատում	և Մոնիթորինգի ժամանակ վեր կհանվեն պլանավորման կամ իրականացման շրջանակներում առկա խնդիրները: Գնահատման արդյունքները թույլ կտան եզրակացնել կլաստերի նպատակների կատարման վիճակը, ուժեղ և թույլ կողմերը:	ՀՀ կառավարության որոշմամբ ձևավորված հանձնախումբ և կլաստերների կառավարման խորհուրդ
5.3	Հաշվետվությունների կազմում ներկայացում	և Կլաստերի գործունեության արդյունքները ներառվում են տարեկան հաշվետվություններում: Հաշվետվությունը ներկայացվում է կլաստերի գլխավոր խորհրդում և հաստատվում բաց քվեարկության արդյունքում: Որից հետո հաշվետվությունները ներկայացվում և լսվում են ՀՀ կառավարության համապատասխան հանձնաժողովներում:	Կլաստերի գլխավոր խորհուրդ, ՀՀ էկոնոմիկայի կամ ճյուղային նախարարություն, ՀՀ Կառավարություն և Տարածքային ինքնակառավարման մարմիններ

ՀԱՎԵԼՎԱԾ 8

Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի կառուցվածքը

Ագրարային կլաստերի զարգացման ծրագիրը կարող է ընդգրկել հետևյալ բաժինները.

1. Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի անձնագիրը
2. Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի նպատակները և խնդիրները
3. Ագրարային կլաստերի զարգացման նախադրյալները
4. Ագրարային կլաստերի մասնակիցների համատեղ նախագծերը
5. Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը
6. Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի նպատակային, արդյունքային ցուցանիշները
7. Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը

7.1 Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի հավելվածում կարելի ընդգրկել հետևյալ տեղեկատվությունը.

Հավելված 1. Ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը /նյութական, աշխատանքային ռեսուրսներով ապահովվածությունը, ծրագրի ֆինանսավորման աղբյուրները/

Հավելված 2. Ծրագրի իրականացման արդյունավետության գնահատման ցուցանիշները

1.«Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի անձնագիր» բաժինը կարող է պարունակել հետևյալ տեղեկատվական ենթաբաժինները.

- ագրարային կլաստերի զարգացման ծրագրի անվանումը,
- ծրագիրը նախագծողները,
- ծրագրի իրականացման փուլերը և ժամկետները,
- ծրագրի նպատակային, արդյունքային ցուցանիշները:

2. «Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի նպատակները և խնդիրները» բաժնում հստակեցնել ծրագրի նպատակները և խնդիրները, ամփոփ ներկայացնել ծրագիրը:

3.«Ագրարային կլաստերի զարգացման նախադրյալները» բաժինը կարող է ընդգրկել հետևյալ տեղեկատվական ենթաբաժինները.

• շահագրգիռ կողմերի պոտենցիալ հնարավորությունների և ընտրված տարածաշրջանի ագրարային ներուժի գնահատում,

- ագրարային կլաստերի զարգացման ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների գնահատականը (SWOT վերլուծություն),
- ագրարային կլաստերի ենթակառուցվածքի ապահովվածության գնահատում,
- արտադրական կոոպերացման և առևտրային փոխհամագործակցության հնարավորությունների գնահատում:

4. «Ագրարային կլաստերի մասնակիցների համատեղ նախագծեր» բաժինը պարունակում է միջոցառումների համալիր, որոնք ուղղված են համատեղ նախագծերի իրականացմանը, շահագրգիռ կողմերի մրցունակության մակար-դակի բարձրացմանը և նորարական տեխնոլոգիաների ներդրմանը:

Ագրարային կլաստերի մասնակից սուբյեկտների կողմից իրականացրած յուրաքանչյուր համատեղ նախագծի մասին տեղեկատվությունը պետք է արտացոլվի հետևյալ ենթաբաժիններում.

- ագրարային կլաստերի մասնակիցների կողմից իրականացվող համատեղ նախագծի անձնագիրը,

- համատեղ նախագծի բնութագիրը և ակնկալվող արդյունքները, դրա ազդեցությունը ագրարային կլաստերի զարգացման ծրագրի առջև դրված նպատակներին հասնելու և խնդիրները լուծելու վրա,

- համատեղ նախագծի իրականացման ծախսերի գնահատականը, յուրաքանչյուր միջոցառման բնութագիրը, կատարման ժամկետը, կատարողները, ֆինանսավորման աղբյուրները,

- մասնակիցների դերը և գործառույթները, իրավունքները և պարտականությունները համատեղ նախագծի իրականացման ընթացքում,

- առաջատար կազմակերպության դերակատարությունը և գործառույթները,

- պետական բյուջեից ֆինանսական միջոցների ներգրավման անհրաժեշտության հիմնավորումը:

5. «Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը» բաժինը կարող է ընդգրկել հետևյալ տեղեկատվական ենթաբաժինները.

- ագրարային կլաստերի զարգացման ծրագրի ռեսուրսային ապահովվածությունը արտաբյուջետային աղբյուրներից՝ ագրարային կլաստերի մասնակիցների անդամավճարները, մասնավոր ներդրումները, ֆինանսավարկային կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների ֆինանսական միջոցները և այլն:

- ագրարային կլաստերի զարգացման ծրագրի պետական աջակցությունը, ինչպես ուղղակի ֆինանսավորումը՝ ՀՀ բյուջեից, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներից, այնպես էլ անուղղակի կարգավորումը:

6. «Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի նպատակային, արդյունքային ցուցանիշներ» բաժինը ընդգրկում է հեռանկարային ցուցանիշներ կլաստերի զարգացման ծրագրի արդյունավետ գործունեության իրականացման վերաբերյալ, մասնավորապես. հեռանկարում ֆերմերային տնտեսությունների, կոոպերատիվների, վերամշակողների կողմից թողարկված արտադրանքի ծավալը, համախառն և ապրանքային արտադրանքի արժեքը, արտադրական ծախսերի մեծությունը, աշխատանքի արտադրողականության մակարդակը, իրականացվող ներդրումային և նորամուծական նախագծերի քանակը, ներդրումների ծավալը, պլանային շահույթը, շահութաբերության մակարդակը և այլ ցուցանիշներ:

7. «Ագրարային կլաստերի զարգացման ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը» բաժնում անհրաժեշտ է ներկայացնել կլաստերի ազդեցությունը մարզի կամ համայնքի սոցիալ –տնտեսական իրավիճակի զարգացման վրա, նոր ստեղծված աշխատատեղերի քանակը, տեղական եկամուտների վրա ագ-րարային կլաստերի ազդեցությունը:

I. ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գիտական հրապարակումներ

1. Ա. Ոսկանյան, Մ. Հովհաննիսյան // Кластерная политика - как инструмент повышения конкурентоспособности аграрного сектора республики Армения // Инновационное развитие АПК: экономические проблемы и перспективы: материалы XV междунар. науч.-практич. конф. посвященной 60-летию экономического факультета Кубанского ГАУ (г. Краснодар, 14-15 мая 2020 г.) / сост. А. И. Трубилин, К. Э. Тюпаков, А. А. Адаменко. – Краснодар: КубГАУ, 2020. – 467 с.
2. Ա. Ոսկանյան, Մ. Հովհաննիսյան // ՀՀ Շիրակի մարզում հացահատիկային կլաստերի ձևավորումը, որպես պարենային անվտանգության ապահովման գործոն // Ագրոգիտություն և տեխնոլոգիա պարբերական 2021,1/73, DOI: 10.52276/25792822-2021.1-41, [voskanyan.pdf \(anau.am\)](https://voskanyan.pdf(anau.am))
3. Ա. Ոսկանյան, Ա. Հարությունյան // ՀՀ Տավուշի մարզում արիշտայի արտադրության կազմակերպումը որպես ցորենի մշակության խթանման միջոց // Գավառի պետական համալսարանի Գիտական հոդվածների ժողովածու, 10, 2021թ.
4. Ա. Ոսկանյան, Կ. Մնացականյան Մ. Ղազարյան // Կլաստերիզացիան որպես ՀՀ պտուղ բանջարեղենի արժեչղթայի կատարելագործման միջոց // «Հայկական տնտեսագիտական հանդես»-ի 1-ին համար, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2021թ.:
<https://arar.sci.am/dlibra/publication/307252/edition/282139/content>
5. Ա. Ոսկանյան, Մ. Ղազարյան // ՀՀ Տավուշի մարզում հացահատիկային տնտեսության զարգացումը կլաստերային մոտեցումների կիրառմամբ // Եվրոպական համալսարան: Գիտ. Հոդվածների ժլվ./ԵՀ. Գլխ. Խմբ.' Հ. Բիշարյան, - Եր.: «ԵՀ» հարտ., 2021: Գիրք 12 (1) <https://eua.am/wp-content/uploads/2021/07/12.pdf>
6. V. Aleksanyan, K.Mnatsakanyan, Orekhova, A. Chmil // Issues of Swine Breeding Development and the Main Solution Ways in the Republic of Armenia // Ագրոգիտություն և տեխնոլոգիա պարբերական 2020,4/72 https://library.anau.am/images/stories/grqer/agro-tex/2020-4/aleksanyan_mnatsakanyan.pdf
7. Ա. Ոսկանյան, Մ. Հովհաննիսյան // Օրգանական գյուղատնտեսական կլաստերի ձևավորման մոտեցումները ՀՀ Կոտայքի մարզում // «Հայկական տնտեսագիտական հանդես», 2.2021, էջ 154-165

8. А Восканян, Э Казарян, М. Оганисян // Вопросы внедрения и финансирования кластерных инициатив в аграрном секторе Республики Армения // На этапе публикации в Управление инновационным развитием агропродовольственных систем на национальном и региональном уровнях , 2021, Воронежский государственный аграрный университет имени императора Петра I
9. А Восканян, К. Мнацакянян, М. Казарян // ВНЕДРЕНИЕ В АГРАРНОМ СЕКТОРЕ КЛАСТЕРНЫХ ПОДХОДОВ КАК ИНСТРУМЕНТ РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ ТЕРРИТОРИЙ РА // На этапе публикации в Ереванский Международный научно-практический конференция «Проблемы глобального переустройства в контексте социально-экономического развития стран, регионов и сельских территорий» 2021г.
10. V. Aleksanyan, K. Mnatsakanyan // Modern transformations and the strategic development perspectives for the fodder production sector in the Republic of Armenia// Ներկայացվել է սիմպոզիոնի Scopus շտեմարանի անսագրերից մեկում, գտնվում է գրախոսման փուլում:
11. Э. Казарян, Г. Тспнецян, С. Абрамян. // Количественная оценка воздействия природных и экономических факторов на объемы производства зерновых культур в Республике Армения// На этапе публикации в Ереванский Международный научно-практический конференция «Проблемы глобального переустройства в контексте социально-экономического развития стран, регионов и сельских территорий» 2021г.

Զեկուցումներ գիտաժողովներում

1. ВНЕДРЕНИЕ В АГРАРНОМ СЕКТОРЕ КЛАСТЕРНЫХ ПОДХОДОВ КАК ИНСТРУМЕНТ РАЗВИТИЯ СЕЛЬСКИХ ТЕРРИТОРИЙ РА// Ереванский Международный научно-практический конференция «Проблемы глобального переустройства в контексте социально-экономического развития стран, регионов и сельских территорий» 2021г.
2. Количественная оценка воздействия природных и экономических факторов на объемы производства зерновых культур в Республике Армения// Ереванский Международный научно-практический конференция «Проблемы глобального переустройства в контексте социально-экономического развития стран, регионов и сельских территорий» 2021г.

III. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԸ

IV. ՁԵՆՔԵՐԿԱԾ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Վ. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

h/h	ազգանուն	անուն	հայրանուն	ծննդան թիվ	անձնագրի սերիա, համար	գիտական աստիճան	պաշտոն	Հրամանագրման ամսաթիվ	ամսական աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը (հազար դրամ)
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Ոսկանյան	Աշոտ	Երջանիկի	1953	AM 0221055	տ.գ.թ. դոցենտ	Տնօրեն	01.02.2021	
2	Մնացականյան	Կարինե	Պետրոսի	1984	85445071	տ.գ.թ	Առաջ. գիտ. աշխ.	01.02.2021	
3	Հովհաննիսյան	Մարիաննա	Էդուարդի	1985	8706350	տ.գ.թ	Առաջ. գիտ. աշխ.	01.02.2021	
4	Աբրահամյան	Սյուզաննա	Վարդգեսի	1980	AM 0782486	տ.գ.թ	Ավագ. գիտ. աշխ.	01.02.2021	
5	Ղազարյան	Մարգո	Վարդանի	1988	AT 0527282	–	Ավագ. գիտ. աշխ.	01.02.2021	
6	Հախնազարյան	Տիգրան	Հովսեփի	1980	AT 0406965	–	Կրտսեր գիտ. աշխ.	01.02.2021	

Կազմակերպության
ղեկավար՝

_____ (ստորագրություն)

_____ (Ա.Ա.Հ.)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝

_____ (ստորագրություն)

_____ (Ա.Ա.Հ.)

«__» _____ 20... թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» _____ 20.. թ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի և _____ (կազմակերպության անվանումը) -ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ (անուն, ազգանուն) -ի, հանդիսանալով «___» _____ 20..թ. կնքված **գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին** N _____ պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
<p align="center">_____</p> <p align="center"><i>(կազմակերպության անվանումը)</i></p> <p>Տնօրեն/ռեկտոր՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">_____</p> <p align="center"><i>(անուն, ազգանուն)</i></p>	<p>Աշխատակազմի ղեկավար՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ</p>

Կ.Տ.

Կ.Տ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» _____ 20.. թ.

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն, ի դեմս աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանի և _____ (կազմակերպության անվանումը) -ը, ի դեմս տնօրեն/ռեկտոր _____ (անուն, ազգանուն) -ի, հանդիսանալով «___» _____ 20..թ. կնքված **գիտական և գիտատեխնիկական գործունեության ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին** N _____ պայմանագրի Կողմեր, կազմեցին սույն արձանագրությունն այն մասին, որ Կողմերն ամբողջությամբ իրականացրել են պայմանագրով իրենց վրա դրված պարտավորությունները:

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՀՀ ԿԳՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
<p align="center">_____</p> <p align="center"><i>(կազմակերպության անվանումը)</i></p> <p>Տնօրեն/ռեկտոր՝ _____</p> <p align="center"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">_____</p> <p align="center"><i>(անուն, ազգանուն)</i></p>	<p>Աշխատակազմի ղեկավար՝ _____</p> <p align="right"><i>(ստորագրություն)</i></p> <p align="center">ԼԵՎՈՆ ՄԱՐԴՈՅԱՆ</p>

Կ.Տ.

Կ.Տ.